Community-led Urban Strategies in Historic Towns (COMUS)

Funded by the European Union and the Council of Europe

EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

Implemented by the Council of Europe

«Համայնքի կողմից իրականացվող քաղաքաշինական ռազմավարություններ պատմական քաղաքներում» (COMUS) ծրագիր

Վարպետաց փողոցի (Ռուսթավելու-Գորկու փողոցների հատված) պատմամշակութային միջավայրի վերականգնում, վերակառուցում և պահպանություն

Նախնական տեխնիկական գնահատում

Բովանդակություն

1. Ներածական 3
2. Ամփոփագիր՝ վայրը և դրա կառավարումը 4
3. Վարչական տեղեկություններ 5
4. Վիճակի եզրակացություն 7
5. Առկա տեղեկություններ 8
6. ՆՏԳ-ի շրջանակը 9
7. ՆՏԳ 10
8. Փաստաթղթավորում 17
9. Նպատակահարմարության վերաբերյալ ուսումնասիրություններ 19

1. Ներածական

Նկ.1. Տեղադիրքը (սև եզրագիծ)

Նկ.2. Վարպետաց փողոց (ընդհանուր տեսարան)

1.1 Երկիրը կամ տարածքը՝ ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի
1.2 Տեղեկությունները համադրող կազմակերպության անունը՝ Կումայրի պատմաճարտարապետական արգելոց
1.3 Կոնտակտային անուն՝ Ստեփան Տեր-Մարգարյան
1.4 Էլ-հասցե՝ termargaryan52@mail.ru
1.5 Շենքի կամ վայրի անվանումը և հասցեն՝ Վարպետաց փողոց
10*) Ռուսթավելի-Վարպետաց փողոցի անկյունային կառույց (Ռուսթավելի 45 փ.),
4) Ավետիք Իսահակյանի տուն-թանգարան (Ռուսթավելի 46 փ.),
5) Վարպետաց փողոցի աջ կողմում գտնվող երկու բնակելի տներ,
1) Հովհաննես Շիրազի հուշաթանգարան (Վարպետաց 49 փ.):
**Հուշարձան շենքերի համարակալումը տրված է գլխավոր հատակագծի սխեմատիկ գծագրում*
1.6 Գույքագրման համար(ներ)ը՝ 10) 7.1.4.945, 4) 7.1.4.953, 5) 7.1.4.221 և 7.1.222, 1) 7.1.4.873
1.7 Կառույցի/հուշարձանի/վայրի տեսակը՝ ա) հանրապետական, բ) հանրապետական, գ) տեղական, դ) հանրապետական նշանակությունների
1.8 Կարևոր ամսաթվեր՝ 10) XIX դ., 4) 1850 թ., 5) 1880-1900 թթ., 1) 1886 թ.
1.9 Ընթացիկ կիրառում(ներ)ը՝ 10) մասամբ գործող, 4) տուն-թանգարան /գործող/, 5) բնակեցված, 1) հուշաթանգարան /գործող/:

2. Ամփոփագիր՝ վայրը և դրա կառավարումը

Վարպետաց փողոցի այս հատվածում տեղակայված ճարտարապետական բնակելի տները և հուշաթանգարանները Գյումրի քաղաքի համար հատկորոշական և նշանակալից են, քանի որ բովանդակում են քաղաքային կյանքի յուրատիպ կոլորիտը և մշակույթը: Վարպետաց փողոցի վրա տեղակայված ճարտարապետական այս տները ներկայացնում են XIX-XX դդ. Գյումրու ավանդական ժողովրդական տների պատկերը՝ սև և կարմիր տուֆի համադրությամբ, ավանդական փայտե պատշգամբներով և պատուհաններով, զարդանախշերով և այլն:

Այս փողոցում է ծնվել և ապրել մեծանուն գրող Ավետիք Իսահակյանը, իսկ ավելի ուշ՝ նաև հայտնի գրող Հովհաննես Շիրազը: 1988 թ. Սպիտակի ավերիչ երկրաշարժը հսկայական վնաս հասցրեց Գյումրի քաղաքին և բնականաբար նաև Վարպետաց փողոցին. ավերվեցին և վնասվեցին նշյալ փողոցում գտնվող բնակելի տները և թանգարանները, որի հետևանքով ավերվեց ողջ փողոցը և քայքայվեց պատմական միջուկը: Գտնվելով սեյսմիկ վայրում՝ փողոցը ներկայումս ևս ենթարկվում է ռիսկայնության, բնակելի տուն-հուշարձանների սեփականատերերը գեղագիտական և ճարտարապետական սխալ վերակառուցումներ են իրականացրել, ինչը խոչընդոտում է փողոցն իր նախկին պատմական տեսքին բերելուն: Վարպետաց փողոցի պատմական միջավայրի, հանրապետական և տեղական նշանակության հուշարձանների, քաղաքային կյանքի, կենցաղի, արհեստագործական ավանդույթների վերականգնման և զբոսաշրջության հետագա զարգացման համար նախնական գնահատականով անհրաժեշտ կլինի մոտ 849 7000 000 դրամ (77 027 700 եվրո): Վարպետաց փողոցի պատմական միջավայրի բարեկարգման ու զարգացման ծրագիրը կարճաժամկետ է: Գործընթացին կիրագործեն Գյումրու համայնքապետարանը, անհատ սեփականատերերը, ՀՀ մշակույթի նախարարությունը, մասնակցություն կունենան բնակիչները, քաղաքացիական հասարակությունը, տեղական ինքնակառավարման մարմինների մասնակիցները, ակտիվ խմբերը:

3. Վարչական տեղեկություններ

3.1 Պատասխանատու մարմիններ

10) ՀՀ մշակույթի նախարարություն, Գյումրու համայնքապետարան, «Կումայրի» պատմաճարտարապետական արգելոց - Միեր Մկրտչյանի հուշաթանգարան և «Հայկական ավանդական կերամիկա հետազոտություն» կենտրոն:

4) ՀՀ մշակույթի նախարարություն, Գյումրու համայնքապետարան, «Կումայրի» պատմաճարտարապետական արգելոց - Ավ. Իսահակյանի տուն-թանգարան:

5) Անհատ սեփականատեր, Գյումրու համայնքապետարան, «Կումայրի» պատմաճարտարապետական արգելոց - հուշարձան համարվող երկու բնակելի տներ:

1) ՀՀ մշակույթի նախարարություն, Գյումրու համայնքապետարան, «Կումայրի» պատմաճարտարապետական արգելոց - Հ. Շիրազի հուշաթանգարանը:

3.2 Շենք/վայր, անվանում և հասցե

10) Միեր Մկրտչյանի հուշաթանգարան և «Հայկական ավանդական կերամիկա հետազոտություն» կենտրոն՝ ՀՀ, ք. Գյումրի, «Կումայրի» պատմաճարտարապետական արգելոց, Ռուսթավելի-Վարպետաց փողոցների անկյուն (Ռուսթավելի 45):

4) Ավ. Իսահակյանի տուն-թանգարան՝ ՀՀ, ք. Գյումրի, «Կումայրի» պատմաճարտարապետական արգելոց (Վարպետաց 46):

5) Երկու բնակելի տներ /հուշարձան/՝ ՀՀ, ք. Գյումրի, «Կումայրի» պատմաճարտարապետական արգելոց (Վարպետաց 47):

1) Հ. Շիրազի հուշաթանգարան՝ ՀՀ, ք. Գյումրի, «Կումայրի» պատմաճարտարապետական արգելոց (Վարպետաց 49):

3.3 Քարտեզին հղում

40.787540, 43.842668 - 40.788774, 43.842818- 40.787491, 43.842850 - 40.788855, 43.842989

3.4 Հուշարձանի տեսակը

Վարպետաց փողոցի այս հատվածում տեղակայված ճարտարապետական բնակելի տները և հուշաթանգարանները Գյումրի քաղաքի համար հատկորոշական և նշանակալից են, քանի որ բովանդակում են քաղաքային կյանքի յուրատիպ կոլորիտը և մշակույթը: Վարպետաց փողոցի վրա տեղակայված ճարտարապետական այս տները ներկայացնում են XIX-XX դդ. Գյումրու ավանդական ժողովրդական տների պատկերը՝ սև և կարմիր տուֆի համադրությամբ, ավանդական փայտե պատշգամբներով և պատուհաններով, զարդանախշերով և այլն:

3.5 Սեփականության իրավունք

10) Միեր Մկրտչյանի հուշաթանգարանի շենքը պետական սեփականություն է և օգտագործվում է Գյումրու համայնքապետարանի կողմից, իսկ «Հայկական ավանդական կերամիկա հետազոտություն» կենտրոնի հուշարձան շենքը մասնավոր սեփականություն է և վերանորոգման ընթացքում է:

4) Ավ. Իսահակյանի տուն-թանգարանը պետական սեփականություն է և օգտագործվում է Գյումրու համայնքապետարանի կողմից: Օտարման ոչ ենթակա: Չբնակեցված: Գործող թանգարան:

5) Հուշարձան հանդիսացող երկու բնակելի առանձնատները մասնավոր սեփականություն են, որոնցից մեկը բնակեցված է, մյուսը՝ ոչ:

1) Հ. Շիրազի հուշաթանգարանը պետական սեփականություն է և օգտագործվում է Գյումրու համայնքապետարանի կողմից: Օտարման ոչ ենթակա: Չբնակեցված: Գործող թանգարան:

3.6 Օրենքով սահմանված պաշտպանություն/ սահմանափակումներ

Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանները և դրանց պատմական միջավայրը պահպանվում և սահմանափակվում է «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման» ու «ՀՀ պետական սեփականություն համարվող և

օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով: Հուշարձանի փոփոխության դեպքում՝ հանրապետական նշանակության՝ ՀՀ կառավարության որոշմամբ, իսկ տեղական նշանակության՝ տեղական ինքնակառավարման մարմնի որոշմամբ:

4. Վիճակի եզրակացություն

10) Միեր Մկրտչյանի հուշաթանգարանի անկյունային շենքի այս հատվածը Ռուսթավելի փողոցի ռելյեֆի շնորհիվ կիսանկուղային հարկաբաժինը վերածված է բնակելի ամբողջական հարկի՝ դառնալով երկհարկանի: Առաջին հարկում պատը զարդարված է հինգ սյուների, ունի շքապատշգամբ և մեկ մուտք՝ փայտյա դռնով: Նստվածքային ճաքերն առկա են միայն աջակողմյան հատվածում, հիմքերը՝ ամրակայված են: Հուշարձան շենքի մյուս հատվածը Վարպետաց փողոցի վրա է տեղակայված, որտեղ «Հայկական ավանդական կերամիկա հետազոտություն» կենտրոնն էր: Այստեղ հուշարձանի վիճակն անխաթար է, շենքը միահարկ է կիսանկուղով, իսկ նկուղահարկից հարկը բաժանված է պարզ քիվով, ունի հինգ ակոսավոր որմնասյուներ, պատուհանները ավանդական զարդանախշերով են զարդարված: Հարկաբաժինը ավարտվում է ատամնավոր, զարդանախշ, բարդ տրամատավոր քիվով, ելուստը միջին է: Շենքն ավարտվում է ճոխ զարդարված պարապետով և ավելի համեստ քիվով: Դեպի Վարպետաց թողոց բացվող կիսանկուղային մուտք ունի: Գտնվում է վթարային վիճակում՝ տանիքը փլուզված է, միջհարկային ծածկը պահպանված է, սակայն խարխուլ է: Կառույցի պատերին նկատվում են նստվածքային փոքր ճաքեր: Մայթի վրա պահպանվել է Գյումրու ավանդական սալահատակը:

4) Ավ. Իսահակյանի տուն-թանգարանը գտնվում է լավ վիճակում: Վերականգնվել է 2000-ական թվականներին և վերաբացվել:

5) Վարպետաց 47 հասցեում գտնվող հուշարձան հանդիսացող երկու բնակելի առանձնատներից մեկը անխաթար է, գտնվում է բարվոք վիճակում, տանիքը վերանորոգված է, երկրորդը՝ թեև նախկին տեսքով է պահպանվել, սակայն վթարված վիճակում է:

1) Հ. Շիրազի հուշաթանգարանը գտնվում է լավ վիճակում, վերջին անգամ վերականգնվել է 2000-ական թվականներին:

*Վեց բնակելի տներ, որոնք հուշարձան չեն և մասնավոր սեփականություն գտնվում են լավ վիճակում, սակայն դրանց պարիսպները և դարպասների բազմազանությունը, լրակառույցները, ինչպես նաև տարաբնույթ ինժեներական գծերը խախտել են փողոցի պատմական տեսքը: Առանձնահատուկ ուշադրության է արժանանում Վարպետաց փողոցի վեց ոչ հուշարձան շենքերից մեկը, որը սակայն ունի պատմական արժեք՝ կիսանկուղային մեկ հարկանի կառույցը: Շենքը սկսել է կառուցել ներգաղթյալմերի մի ընտանիք, սակայան ճակատագրի բերումով ստիպված լինելով կրկին գաղթել , շինարարությունը թողել է անավարտ: Կառույցն օժտված է Գյումրու ավանդական բնակելի տների բոլոր արժեքավոր հատկանիշերով՝ բացվածքների պարակալներով, քարի տաշվածքով և շարվածքով: Ուշագրավ է տանիքին պահպանված ծխնելույզը:

**Վարպետաց փողոցի ամբողջ երկայնքով քայքայված են երթևեկելի մասը և մայթերը

5. Առկա տեղեկություններ

1.1 Փաստագրական աղբյուրներ

Լուսանկարներ /ցամաքային/ – անձնական /լավ որակի/, համացանց /միջին որակի/
Տեսանյութ – համացանց (www.youtube.com), միջին որակի

5.2 Օգտագործված գրականություն

Հիմնական աղբյուրներն են՝
http://www.armenianheritage.org/hy/monument/Giumri-I/1288
http://www.arlis.am/
http://shiraz.am/en/
https://hy.wikipedia.org/wiki/%D4%B1%D5%BE%D5%A5%D5%BF%D5%AB%D6%84_%D4%BB%D5%BD%D5%A1%D5%B0%D5%A1%D5%AF%D5%B5%D5%A1%D5%B6%D5%AB_D5%A9%D5%A1%D5%B6%D5%A3%D5%A1%D6%80%D5%A1%D5%B6_(%D4%B3%D5%B5%D5%B8%D6%82%D5%B4%D6%80%D5%AB)

5.3 Արդեն կատարված դաշտային աշխատանքներ

Չկա

5.4 Ընթացիկ ծրագրեր

Չկան

5.5 Արդեն պլանավորված ծրագրեր

Չկան

5.6 Արդեն կատարված ֆինանսական հաշվարկներ

Չկան

6. ՆՏԳ-ի շրջանակը

6.1 Գնահատման չափը/բնույթը

Ներգրավված են երկու փորձագետներ՝

Գայանե Նազլուխանյան՝ վերականգնող ճարտարապետ, 40 տարվա մասնագիտական փորձ, միջազգային փորձագետ,

Լուսինե Իգիթյան՝ պատմաբան, 16 տարվա մասնագիտական փորձ, փորձագետ:

Առաջադրանքի կատարման համար ծախսվել է երեք օր ուսումնասիրությունների համար և չորս օր գրասեղանի մոտ:

6.2 Ուսումնասիրության սահմանափակումները

Վավերագրական, արխիվային փաստաթղթերի, գծագրերի, հատակագծերի, լուսանկարների ձեռք բերում և ծանոթացում, մասնավոր սեփականության դեպքում՝ բնակելի տներ մուտք գործելու դժվարամատչելիություն:

7. ՆՏԳ

7.1 Նախապատմություն՝ ձևը, գործառույթը և զարգացումը

7.1.1 Շենքի/վայրի համառոտ նկարագիրը՝ դրա քաղաքային կամ գյուղական համատեքստի վերաբերյալ նշումներով, եթե կիրառելի է:

Գյումրի քաղաքի Վարպետաց փողոցի (Շիրազ-Ռուսթավելի փողոցների հատված) տեղակայված են թվով երեք հուշարձան-թանգարաններ՝ Հ. Շիրազ, Ավ. Իսահակյան, Միեր Մկրտչյան / վերջինս անկյունային շենք է, որի մի հատվածում տեղակայված է «Հայկական ավանդական կերամիկա» հետազոտական կենտրոնը, որն այժմ վերանորոգման ընթացքում է/: Այստեղ պահվում են և ցուցադրվում են նշված հայտնի գրողների և դերասանի կյանքին և գործունեությանը վերաբերվող ցուցանմուշներ՝ քանդակներ, կիսանդրիներ, անձնական իրեր, զգեստներ, կահ-կարասի, նրանց հեղինակած գրքերը, ձեռագրերը, լուսնկարները: Փողոցում տեղակայված են երեք հուշարձան բնակելի տներ /մեկը նորակառույց՝ հին տան հիմքերի վրա/, որոնք թեև այսօր հանդիսանում են մասնավոր սեփականություն, սակայն կառուցված են եղել XIX-XX դդ. Գյումրու ավանդական ժողովրդական տների ոճում և հանդիսանում են տեղական նշանակության հուշարձաններ: Այս փողոցի երկայնքով տեղակայված են նաև վեց բնակելի տներ, որոնք հուշարձան չեն:

7.1.2 Շենքի կամ վայրի՝ վաղ ժամանակներից մինչև մեր օրերը պատմական զարգացման և էվոլյուցիայի համառոտ ակնարկ:

10) Ռուսթավելի-Վարպետաց փողոցների անկյունային շենքում են գտնվում հանճարեղ դերասան Միեր Մկրտչյանի հուշաթանգարանը և «Հայկական ավանդական կերամիկա հետազոտություն» կենտրոնը: Նախկինում այստեղ էր գտնվում հայտնի «Ուստա Կարո» խաշատունը (խաշատները մինչ օրս հանդիսանում են Գյումրու ավանդական և կոլորիտային սիրելի վայրերը, որտեղ արտահայտվում է ոչ միայն գյումրվա խոհանոցը, այլ նաև ամբողջ մշակույթը՝ համեմված ավանդական հումորով), որը մեծանուն գրող Ավ. Իսահակյանի համանուն վեպի գլխավոր հերոսն էր: Մայթի վրա պահպանվել է Գյումրու ավանդական սալահատակը: ***Շենքն այժմ վթարային է և կարիք ունի վերականգնման և նորոգման, իսկ թանգարանային հատվածում՝ նաև թանգարանի ցուցադրության ժամանակակից և նորովի կազմակերպման:***

4) Ավ. Իսահակյանի տուն-թանգարանը կառուցվել է 1850-ական թվականներ: Այս տանը 1875 թ. ծնվել է մեծանուն գրողը: Շենքը Ալեքսանդրապոլի ավանդական տներից է, որտեղ հստակ երևում է ժողովրդական տան զարգացման փուլերը՝ սկսած ավանդական գյուղատիպ պարզ կացարանից մինչև Ալեքսանդրապոլի ոսկե դարի («Բել էփոք») համալիր տունը: 1988 թ. Սպիտակի երկրաշարժի հետևանքով թանգարանը լրիվ ավերվել էր և վերականգնվեց 2000-ական թվականներին: Տունը տեղադրված է սալարկված և կանաչապատ բակի խորքում: ***Գտնվում է լավ վիճակում***:

5) Վարպետաց փողոցի աջ կողմում երկու բնակելի հուշարձան-տներ են, որոնք կառուցվել են 1880-1900 թթ., որոնցից մեկի վրա դեռևս պահպանվում են կայսերական ժամանակաշրջանից մնացած կարմիր ներկի հետքերը: **Տներից մեկը գտնվում է անխաթար և բարվոք վիճակում, տանիքը վերանորոգված է: Մյուս տունը՝** մեկ հարկանի, կիսանկուղով, Գյումրու բնակելի տներին հարիր ավանդական ճարտարապետական ձևերի կիրառմամբ կառույց է: Ուշագրավ է շենքի տանիքին պահպանված գյումրվա հայտնի մետաղագործական մշակույթի նմուշը՝ նրբորեն մշակված փայտի վառարանի ծխնելույզը: **Շինությունը վերանորոգման կարիք ունի:**

1) XX դ. մեծ ճանաչում ունեցող գրող Հ. Շիրազի հուշաթանգարանը (նախկին անունը՝ Քեշիշովենց տուն) կառուցվել է 1886 թ., սակայն տունը գրողին նվիրվել է 1983 թ., որտեղ նա ապրեց ընդամենը մեկ տարի և մահացավ: 2003 թվականից այստեղ գործում է գրողի տուն-թանգարանը: Թանգարանի շենքի պատերը սև և կարմիր տուֆի համատեղ շարվածքի տիպիկ օրինակ են: Մեր օրերում ջրահեռացման կազմակերպման նպատակով շենքի առաջին հարկի կառույցը պարփակող զարդանախշ քիվի վրա ավելացվել է ճակտոնի պատային հատվածը: ***Շենքը ներքևի հատվածը խոնավանում է, ուստի ջրահեռացման /դրենաժ/ և ցուցադրության նորովի կազմակերպման խնդիր ունի:***

*Փողոցում տեղակայված են ևս հինգ բնակելի տներ, որոնք հուշարձան չեն համարվում, սակայն մեծ հավանականությամբ կառուցվել են հին բնակելի տների հիմքի վրա: ***Գտնվում են լավ վիճակում:*** Առանձնահատուկ ուշադրության է արժանանում Վարպետաց փողոցի վեց ոչ հուշարձան

շենքերից մեկը, որը կիսանկուղային մեկ հարկանի կառույց է: Կառույցն օժտված է Գյումրու ավանդական բնակելի տների բոլոր արժեքավոր հատկանիշերով՝ բացվածքների պարակալներով, քարի տաշվածքով և շարվածքով: Ուշագրավ է տանիքին պահպանված ծխնելույզը:

7.2 Նշանակություն

10) Ռուսթավելի-Վարպետաց փողոցների անկյունային շենքում գտնվող Միեր Մկրտչյանի հուշաթանգարանը և «Հայկական ավանդական կերամիկա հետազոտություն» կենտրոնը կարևոր են պատմական, ճարտարապետական և մշակութային առումով Գյումրի քաղաքի համար՝ որպես 19-րդ դ. վերջին կառուցված ավանդական ժողովրդական տան վառ օրինակ, որը ծառայել է որպես խաշատուն: Բացի այդ ներկայումս այստեղ է գտնվում ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, կինոյի և թատրոնի համաշխարհային ճանաչում ունեցող, ծնունդով գյումրեցի Ֆրունզիկ /Միեր/ Մկրտրյանի տուն-թանգարանը: Այն էլ ավելի ուշագրավ կդառնա շենքի վերականգնումից, վերօգտագործումից հետո, իսկ թանգարանի ցուցադրության կազմակերպման համապատասխանեցումը միջազգային չափորոշիչներին, հետևաբար այն տեղական և հանրապետական նշանակության է:

4) Ավ. Իսահակյանի տուն-թանգարանը, որտեղ ծնվել է մեծանուն գրողը, հիմնովին ավերվեց 1988 թ. ավերիչ երկրաշարժից, սակայն 2000-ական թվականներին այն վերականգնվեց և վերաբացվեց համապատասխանեցնելով նախկին տեսքին: Տուն-թանգարանը կարևոր է պատմական և գրական առումով կարևոր է թե գյումրեցիների, թե բոլոր հայերի համար, քանի որ հուշարձան-շենքը Ալեքսանդրապոլի ավանդական ոսկեդարյան տների բացառիկ նմուշ է, որը անքապտելիորեն կապված է գրողի կյանքի հետ՝ սկսած մանկությունից. այստեղ ցուցադրվում են գրողի կյանքին վերաբերող ցուցանմուշներ, ձեռագրեր, անձնական իրեր, մանկությանը վերաբերվող մասունքներ: Այն մշտապես այցելում են տարբեր ազգի զբոսաշրջիկներ, կազմակերպվում են գրական երեկոներ և գիտաժողովներ: Տուն-թանգարանը միանշանակ ունի տեղական և հանրապետական նշանակություն:

5) Վարպետաց փողոցի երկու բնակելի հուշարձան-տները ունեն պատմական բնույթ՝ վերաբերվելով 19-րդ դարի Գյումրու ավանդական ժողովրդական տներին, որոնք իրենց արտաքին տեսքը պահպանել են մինչ օրս: Այս տները տեղական նշանակություն ունեն:

1) Հ. Շիրազի հուշաթանգարանը (նախկին անունը՝ Քեշիշովենց տուն) կառուցվել է 1886 թ., ապա գրողին է նվիրվել 1983 թ., որտեղ նա ապրեց ընդամենը մեկ տարի և մահացավ՝ դառնալով պատմական և մշակութային նշանակալի արժեք: Ավերիչ երկրաշարժի հետևանքով այստեղ ժամանակավոր բնակություն հաստատեցին անօթևանները, սակայն 2003 թ. այն վերականգնվեց և մինչ օրս ծառայում է որպես հուշաթանգարան: Իր բացառիկ ճարտարապետությամբ, ինչպես նաև որպես գրողի տուն-թանգարան ունի տեղական, ներպետական և հանրապետական նշանակություն, ուր այցելում են բազում գյումրեցիներ, հայեր և օտարերկրացիներ, կազմակերպվում են ցուցահանդեսներ, գրական երեկոներ, գիտաժողովներ Այն ունի ոչ միայն տեղական, այլ նաև հանրապետական նշանակություն:

*Փողոցում տեղակայված են ևս հինգ բնակելի տներ, որոնք հուշարձան չեն համարվում, սակայն մեծ հավանականությամբ կառուցվել են հին բնակելի տների հիմքի վրա: Այս տները չունեն որևէ արժեք և նշանակություն:

Դեպի Գորկու փողոցին նայող անկյունային տունը, որը կառուցվել էր 1880-1900 թթ. Գրիգոր Դրամբյանի պատվերով, գյումրեցիներն անվանում էին «Բարի լույսի տուն», սակայն 1988 թ. ավերիչ երկրաշարժի հետևանքով այն փլուզվեց և այժմ նրա փոխարեն երկհարկանի նորակառույց է՝ խախտված ճարտարապետական ավանդական ձևերով և լուծումներով: Այն չի համապատասխանում պատմական տեսքին և որևէ նշանակություն չունի: Գորկու և Աբովյան փողոցների անկյունային շենքը ցավալիորեն մտաշ չէ անշարժ հուշարձանների պետական ցանկում, սակայն՝ դատելով կառույցի ճարտարապետությունից, աբիրաժեշտ ենք համարում առաջարկություն անել պատկան մարմիններին այն ընդգրկելու, թեկուզ որպես տեղական նշանակության հուշարձան: Կառույցը

Խորհրդային տարիներին, ապա 1988 թ. ավերիչ երկրաշարժի հետևանքով ողջ Գյումրի քաղաքը՝ այդ թվում Վարպետաց փողոցի (Ռուսթավելի-Շիրազ հատվածը) կորցրեց իր պատմական, ճարտարապետական և քաղաքաշինական նշանակությունն ու տեսքը: Հետերկրաշարժյան տարիներին դանդաղ և մասնակիորեն վերականգնեցին Վարպետաց փողոցի նշված հատվածը, որի հետևանքով

չհաջողվեց վերականգնել նրա պատմական ամբողջական տեսքը, սակայն վերականգնված ու մնացած հուշարձանների շնորհիվ այն ունի տեղական և հանրապետական նշանակություն:

7.2.1 Նշանակության/պատմական և ժառանգության կարևորության վերաբերյալ ամփոփ նկարագիր:

Վարպետաց փողոցն իր անունը ստացել է այստեղ տեղակայված Գյումրու տարաբնույթ հին վարպետների (արհեստավորներ)՝ ատաղձագործներ, դարբիններ, դերձակներ, քարտաշներ և այլն, պատվին, ուստի կրում է պատմական և մշակութային բնույթ: Այստեղ կառուցվել են Գյումրու ավանդական ժողովրդական բնակելի տներ՝ կամարներով, հարուստ ու զուսպ զարդաքանդակներով, որոնք ունեն նաև գեղագիտական և ճարտարապետական նշանակություն: Դրանցից կարելի է առանձնացնել սև և կարմիր տուֆ քարի շարվածքների համադրումը, նուրբ ու զարդարված, սակայն կլիմային դիմակայուն փայտյա պատշգամբները, պատուհանները, դռները, ինչպես նաև մետաղե յուրահատուկ դարպասները: Այս փողոցով են սլացել նաև Գյումրու համար խորհրդանշական և ինքնատիպ ֆայտոնները, որոնց պատրաստման արհեստը այսօր մոռացության է ենթարկված: Այս փողոցում է ծնվել և ապրել մեծանուն գրող Ավետիք Իսահակյանը, իսկ ավելի ուշ՝ նաև աշխարհահռչակ գրող Հովհաննես Շիրազը:

7.2.2 Գնահատման մեջ հաշվի առնվող հնարավոր կատեգորիաների ստուգացանկ:

Վարպետաց փողոցը պատմական և գեղագիտական առումով մեծ նշանակություն ունի ինչպես Գյումրի քաղաքի, այնպես էլ ողջ Շիրակի մարզի համար՝ որպես արհեստների և արվեստների կենտրոն, որը չունի նման մեկ այլ օրինակ: Բացի այդ այն ինքնատիպ է իր պահպանված ճարտարապետությամբ և մշակույթով՝ հումորով և ավանդույթներով: Այսպիսով՝ փողոցը բացառիկ տեղական և տարածքային նշանակություն ունի:

7.3 Խոցելիության/ռիսկի գնահատում

1988 թ. Սպիտակի ավերիչ երկրաշարժը հսկայական վնաս հասցրեց Գյումրի քաղաքին և բնականաբար նաև Վարպետաց փողոցին. ավերվեցին և վնասվեցին նշյալ փողոցում գտնվող բնակելի տները և թանգարանները, որի հետևանքով ավերվեց ողջ փողոցը և քայքայվեց պատմական միջավայրը: Գտնվելով սեյսմիկ վայրում՝ փողոցը ներկայումս ևս ենթարկվում է ռիսկայնության, որի հետևանքով հետագա վերականգնողական աշխատանքներում անհրաժեշտ կլինի փողոցի և հուշարձան տների վերակագնումը համապատասխանեցնել սեյսմիկ անվտանգության չափորոշիչներին՝ առանց խաթարելու հուշարձան տների պատմական տեսքը: Փողոցի ներկայիս արտաքին լուսավորությունը և ծածկույթը խաթարված է և քայքայված, ինչը արհեստագործական ավանդույթների կորստի մասին է վկայում: Հրատապ է ապագայում փողոցի վերականգնողական աշխատանքներում կիրառել Գյումրվա ավանդական սալապատումը և արտաքին մետաղե լուսատուների միջոցով լուսավորումը, ինչը կվերականգնի Վարպետաց փողոցի գեղագիտական ու պատմական շունչը: Վարպետաց փողոցի այս հատվածում գտնվող երեք թանգարանները չունեն ուղղորդող ցուցանակներ, ինչը ինտենսիվ այցելությունների պատճառ է դարձել, իսկ բնակելի տուն-հուշարձանների սեփականատերերը գեղագիտական և ճարտարապետական սխալ վերակառուցումներ են իրականացրել, ինչը խոչընդոտում է փողոցը իր նախկին պատմական տեսքին բերելուն: Փողոցի երկայնքով ձգվող ավանդական նեղ առվակը այսօր չի գործում կուտակված կեղտի պատճառով: Անհրաժեշտ է փողոցի ժառանգականության վերականգնման գործում ինտեգրել ինչպես համապատասխան պետական մարմիններին, այնպես էլ փողոցի բնակիչներին: Վարպետաց փողոցի պահպանման և վերականգնման համար խոչընդոտ են հանդիսանում վարչական թերությունները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայությունը, ինչպես նաև ազգաբնակչության գիտակցության բարձրացումը փողոցի պատշաճ շարունակականությունը երաշխավորելու համար:

7.4 Տեխնիկական վիճակ

10) Ռուսթավելի-Վարպետաց փողոցների անկյունային շենքը (Նկար3, Նկար 4, Նկար 5)՝ ունենալով մշակութային, պատմական և ճարտարապետական մեծ արժեք, այժմ խիստ վթարային վիճակում է:

Կառույցն իրենից ներկայացնում է տեղական տուֆ քարով և կրավազային կապակցող նյութով կառուցված մի շինություն՝ ունի Վարպետաց և Ռուսթավելի փողոցների անկյունագծային առանցքի նկատմամբ համաչափ ճակատային և հատակագծային կառուցվածք: Ճակատները ջլատված են ուղղահայաց կիսաշրջան և ակոսներով զարդարված հինգ զույգ որմնասյուներով, որոնք հենված են պարզ տրամատավոր խարիսխների և պսակվում են նրբագեղ խոյակներով: Հուշարձանն ունի նաև հորիզոնական ջլատում՝ կիսանկուղի և բնակելի հարկաբաժնի և վերջինիս ու տանիքատակի պարապետի միջև, որոնցից առաջինը՝ պարզ տրամատավոր է, իսկ երկրորդը՝ ատամնավոր և բարդ բուսական մոտիվ ունեցող քանդակազարդ և խիստ արտահայտված գոտի է: Ճակատներում բացված լայն լուսամուտների բարավորները կորաձև են՝ հարիր գյումրվա ճարտարապետությանը և առնված են բարդ տրամատավոր պարակալի մեջ: Կիսանկուղի լուսամուտները մշակված են ավելի համեստ: Ռուսթավելի փողոցին հարող ճակատն ունի բաց պատշգամբ, որը նույն պես բնորոշ է Գյումրու բնակելի տան ճարտարապետությանը: Ռուսթավելի փողոցի ճակատն ավարտվում է դեպի ներքին բակ տանող շքեղ զարդարված կամարակապ մուտքով, ուր բացակայում է ավանդական կոփածո դարպասը: Կառույցի հարկաբաժինների ծածկն իրականացված է փայտե գերաններով , տանիքը երկլանջ է , հենված փայտե ծպեղնածածկի վրա մետաղական ծածկույթով: Վարպետաց փողոցի՝ կառույցին հարող մայթին պահպանվել է ավանդական սալարկումը: 1988 թվականի ավերիչ երկրաշարժը և կառույցի մեծ հատվածի չբնակեցվածությունը հուշարձանին մեծ վնաս են պատճառել ՝ մասնավորապես փլուզվել են տանիքի և միջհարկանի փայտե ծածկերը, Վարպետաց փողոցի ճակատի վրա նկատվում են նստվածքային ճաքեր:

4) Ավ. Իսահակյանի տուն-թանգարանը ուղղանկյուն հատակագծով (Նկար 6)՝ գլխավոր հատվածի եզրերից դուրս եկող թևերով, ընդարձակ և մեկ հարկանի մի կառույց է, որը վերանորոգված է և ունի բարեկարգ և ցանկապատված տարածք: Կառույցն ունի նաև զարդանաշ բազրիքներով պատշգամբ: Թանգարանն այժմ գործում է այցելուների համար:

5) Վարպետաց փողոցի հուշարձան-շենքերի (Նկար 8) ընդհանուր տեսքը ցավալիորեն խաթարված է սեփականատերերի անհարիր միջամտություններով՝ իրականացված են լրակառույցներ, վերջիններս կառուցված են երկաթբետոնե պատերով անտեսելով ավանդական տուֆ քարը, որոշ շենքերի մուտքերին տեղադրված են մետաղական դարպասներ, ցանկապատված են քարե պարիսպներով, որոնց քարերի տաշվածքն օտար է ավանդականին:

1) Հ. Շիրազի հուշաթանգարանը (Նկար 7) բարդ հատակագծով, կարմիր և սև երանգի տուֆ քարից կառուցված, բացվածքների հարուստ մշակումով և շքեղ կամարակապ դարպաս ունեցող շինություն է: Այն վերանորոգված է, սակայն գրունտային ջրերի հեռացման ցամաքուրդի խցանման և խարխլման հետևանքով կառույցի խաչվող թաղերով ծածկված նկուղի պատերի ստորին հատվածներում նկատվում են խոնավացումներ: Բակի սալարկումը անհարթ է, ինչը նպաստում է այցելուների վտանգավոր տեղաշարժին: Բակը պարփակված է պարսպապատով և մետաղական ճաղավանդակով:

* Վարպետաց փողոցը չունի համապատասխան լուսավորություն, էլեկտրական սյուներից տարվող և տներին միացվող էլեկտրական մալուխներն անցկացված են պատահական սկզբունքով և առաջացրել մի ամբողջ ,,սարդոստայն,, փողոցի երթևեկելի մասի և մայթերի ծածկույթները քայքայված է, փողոցը զուրկ է կարգավորված կանաչապատումից:

7.5 Անհրաժեշտ վերանորոգման համառոտ նկարագիր

1.Ռուսթավելի-Վարպետաց փողոցների անկյունային շենքի վերանորոգման անհրաժեշտությունը պայմանավորված է նրա գեղագիտական, պատմամշակութային և ճարտարապետական մեծ արժեքով: Հուշարձանն ունի տանիքի, միջհարկային ծածկերի, կոնստրուկտիվ համակարգի և հատակագծային խաթարված նախնական լուծումների վերականգնման, վերանորոգման և վերահատակագծման, ներքին բակի բարեկարգման առաջնահերթ կարիք: Կառույցի կայունությունն ու անվտանգ շահագործումն ապահովելու նպատակով և առաջնորդվելով Ռիխտերի 12 բալանոց սանդղակի 9 բալ սեյսմավտանգ գոտում տեղադրված լինելու հանգամանքով, անհրաժեշտ է՝

- ամրացնել կառույցի հիմքերը, վերացնել պատերի նստվածքային երևույթները ցամաքուրդի միջոցով,

- կրակաթով ու բարձր ճնշման տակ ներարկել կրաշաղախի քայքայվածության հետևանքով միջուկում առաջացած դատարկությունները
- վերականգնել փայտե կոնստրուկցիաները և պատշգամբները
- հետագա օգտագործման նպատակով կատարել նորոգումներ կառույցի բորոլ հատվածներում
- բարեկարգել բակը
- մշակել կառույցի օգտագործման գործառնական նոր լուծումներ հաշվի առնելով հուշարձանում տեղակայված երկու տարբեր հաստատությունների գործառույթների կանոնակարգումը և օգտագործման ու պահպանման համատեղման պայմանները

2. Վարպետաց փողոցի բնակելի հուշարձան-շենքերի վերացված ճարտարապետական տեսքն ու պատմականորեն ձևավորված միջավայրը վերստեղծելու նպատակով անհրաժեշտ է ապամոնտաժել անհարիր հավելումներն ու լրակառույցները, վերականգնել իրենց նախնական տեսքը՝ պատերի շարվածքներն ու քարերի ավանդական տաշվածքը, կոփածո դարպասները, ծխնելույզները, ջրատար խողովակներն ու նրանց ձագարները, լուսամուտների ճաղավանդակները և փայտե ատաղձը, , բարեկարգել բնակելի տների ներքին բակերն ու նրանց հետ կապված գյումրվա բոլոր ավանդույթները:

3. Անհրաժեշտ է վերականգնել Վարպետաց փողոցի ինժեներական ենթակառուցվածքները, վերակենդանացնել գյումրվա հասարակական կյանքի դրվագները՝ ֆայտոնների շահագործում, արհեստագործական նմուշների վաճառքի և սննդի սպասարկման կետեր և այլն:

7.6 Կոնսերվացման/վերականգնման քաղաքականություն և առաջարկներ

Հուշարձանի նորոգումն ու ամրակայումը պետք է հիմնվի հուշարձանի մշակութային արժեքի լավագույնս անխաթար և ճշգրիտ վերստեղծման քաղաքականության հենքի վրա: Անհրաժեշտ է պահպանել կառույցների քարատեսակը, նյութագիտական լաբորատոր ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա՝ կապակցող շաղախի տեսակը, կառույցի ճարտարապետական ձևերի անխաթարությունը, կոնստրուկտիվ լուծումների տվյալ ժամանակաշրջանի տեխնոլոգիաները, վերականգնել սկզբնական գործառույթները, կամ դրանք վերափոխելու դեպքում՝ խստագույնս պահպանելով հատակագծային նախնական լուծումները:

7.6.1 Վայրի տեսլականի և դրա կայունության վերաբերյալ ամփոփումը նախնական փուլում:

«Կումայրի» արգելոցի տարածքում որակյալ քաղաքային միջավայրի ձևավորման և, կանոնակարգման, ակտիվ և հավասարակշռված տրանսպորտային հաղորդակցության և առկա պատմական միջավայրի մատչելիության ապահովվմանն ուղղված համապատասխան միջոցառումների իրականացման միջոցով:

7.6.2 Կոնսերվացման փիլիսոփայություն:

Վարպետաց փողոցի թե՝ ճարտարապետական հուշարձանները և թե՝ պատմական քաղաքային միջավայրը ենթակա են ամբողջական վերականգնման

7.6.3 Միջամտության մակարդակ:

Հուշարձանների և տեսարժան վայրերի պահպանությունը հենվում է ժամանակակից փորձի և ուսմունքի վրա, ինչն, անշուշտ, խարսխվում է պահպանության միջազգային սկզբունքներին վերաբերող ամենաներկայացուցչական փաստաթղթի՝ Վենետիկի խարտիայի վրա:

Վարպետաց փողոցի պատմաճարտարապետական հուշարձաններն ու պատմական միջավայրը որպես «Կումայրի» արգելոցի բաղկացուցիչ մաս անհրաժեշտ է վերականգնել հետևելով խարտիայի բոլոր դրույթներին :

Սակայն հայտնի է, որ հուշարձանները, քաղաքային համակառույցները և բնապատկերը շրջափակող միջավայրի կառավարումը պահանջում է մոտեցումներ, որոնք պետք է բախվեն բազում շահերի, ներառյալ սեփականատերերին: Դրանք շատ դեպքերում հանգեցնում են հուշարձանների մշակութային և ֆիզիկական միջավայրը վնասող սոցիալ-տնտեսական ձևափոխումների: Սոցիալ-տնտեսական պարտադրանքները հաճախ հանգեցնում են այնպիսի ձևափոխման, որն անմիջապես

ունենում է ծանր հետևանքներ հուշարձանային ընդարձակ տարածքների համար: Հատուկ ուշադրության և աճող մտահոգության առարկա է հանդիսանում նաև բնական աղետների հետևանքով ամայացած ու տուժած վայրերի վերակառուցումը. հրատապությունը հաճախ պարտադրում է մի կողմ թողնել մշակութային ընդգրկումներն ու ավանդույթները՝ ի նպաստ նոր տեխնոլոգիաների: Այս ամենը կրկին պարտադրում է հրաժարվել որոշ սկզբունքներից:

7.6.4 Պատշաճ օգտագործման նախնական առաջարկներ, եթե կիրառելի է:

Համաշխարհային փորձը միանշանակորեն հաստատում է՝ հուշարձանների և դրանց պատմական միջավայրի լավագույն պահպանությունը դրանց օգտագործումն է: Դրա արդյունքում լուծվում է փոխկապակցված երկու հիմնախնդիր՝ հուշարձաններն ու դրանց պատմական միջավայրը ներգրավվում են տնտեսական շրջանառության մեջ, և միաժամանակ բարելավվում է դրանց պահպանության խնդիրը: Հուշարձանների վատթարացման վրա մարդկային գործոնը ունի մեծ ազդեցություն և այդ գործոնը պետք է փոխել դրականի՝ հուշարձանը պետք է շահագործել միայն մեկ ձևով՝ օգտագործման եղանակով: Եթե չի օգտագործվում, ուրեմն նա տեր չունի:

7.6.5 Սոցիալական կիրառումների և կայուն զարգացման հնարավորություններ*՝*

Վարպետաց փողոցի պատմական միջավայրի բարեկարգումն ու զարգացումը կարող է ստեղծել նոր աշխատատեղեր, ինչպես նաև կնպաստի բնակչության, համայնքի, տարբեր պետական և հասարակական կազմակերպությունների համագործակցությանը: Այն կդառնա օրինակելի թաղամաս Կումայրիի տարածքում՝ նպաստելով զբոսաշրջությանը և զարգացնելով թանգարանների հանրահռչակումն ու այցելուների թիվը:

7.6.6 Ամրացման/ծածկապատման, վերանորոգման, կոնսերվացման, վերականգնման գերակայությունների ընդհանուր գնահատում:

Յուրաքանչյուրի և ընդհանուրի համար առաջարկները տրված են 7.5 և 7.6.3 կետերում:

7.6.7 Հանրամատչելիություն:

Վարպետաց փողոցի պատմական միջավայրի բարեկարգումը և զարգացումը Գյումրի քաղաքի համար մեծ նշանակություն ունի և պոտենցիալ համայնքային օգուտ է: Թանգարաններում կանցկացվեն հայ մեծ գրողների ստեղծագործություններին նվիրված փառատոներ, ասմունքի երեկոներ, որոնք կդառնան արվեստագետների, դերասանների, գրողների ստեղծագործական կյանքի գիտական ուսումնասիրությունների կենտրոն, դպրոցահասակ երեխաների արվեստներին մերձենալու լավագույն վայրեր, համայնքային մշակութային կյանքի որակի բարձրացման հնարավորության վայրեր:

7.6.8 Այլ առավելություններ:

Կվերականգնվի պատմական միջավայրը, թանգարաններում կկազմակերպվեն տարբեր տիպի մշակութային միջոցառումներ, կբացվեն արվեստանոցներ, որտեղ երիտասարդ սերնդին տարբեր արհեստներ կսովորեցնեն:

7.7 Ֆինանսներ

Վարպետաց փողոցի պատմամշակութային արժեքը վերակենդանացնելու նպատակով անհրաժեշտ են ֆինանսական միջոցներ, որոնք ուղղված կլինեն հետևյալ միջոցառումներն իրականացնելու համար.

I Վերականգնման գիտանախագծային փաստաթղթերի մշակում (այդ թվում համալիր փորձաքննություն)-40 000 000 դրամ (մոտ 75 500 եվրո)

II Իրականացման աշխատանքներ 809 700 000 դրամ (մոտ 1 527 700 եվրո)

Ընդամենը՝ 849 700 000 դրամ (77 027 700 եվրո)

7.7.1 Բյուջետային կարիքների ընդհանուր գնահատում և փուլայնություն:

Ռուսթավելի-Վարպետաց փողոցների անկյունային շենքի խիստ վթարայնության կանխման նպատակով անհրաժեշտ են անհապաղ միջամտություններ, որոնց ընդհանուր արժեքը կազմում է **7 000 000 դրամ (1 320 000 եվրո)**

7.7.2 Ներդրումների ներգրավման (իրական) հնարավորությունների գնահատում:

Վարպետաց փողոցի հուշարձանների և դրանց պատմական միջավայրի վերականգնման գործում հնարավոր ներդրումներ կարող են կատարել միջազգային դոնոր կազմակերպությունները (Համաշխարհային բանկ, Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկը, Ասիկանա զարգացման բանկը են այլն), Հայաստանի Հանրապետությունն ի դեմս ՀՀ մշակույթի նախարարության, այլ միջազգային ու համահայկական հիմնադրամներ («Գյումրիի ընկերներ», «Հայաստան համահայկական հիմնադրամ» եւ այլն):, ինչպես նաեւ մասնավոր ներդրողներ:

7.7.3 Ներդրումների վերականգնման (իրական) հնարավորությունների գնահատում:

Վարպետաց փողոցի անցուդարձը և նրա բնակիչների երբեմնի առօրյա եռուզեռն աշխուժացնելու նպատակով առաջարկվում է վերստեղծել և վերակենդանացնել ազգային մշակութային կյանքն ի դեմս դարբնագործության, խեցեքործության, խոհանոցի, որում իր անմիջական մասնակցությունը կունենա զբոսաշրջության ակտիվացումը: Այդ նպատակով առաջարկվում է փողոցի նորակառույց շինություններից մի քանիսը՝ մասնավորապես Վարպետաց և Շիրազի փողոցների անկյունում տեղադրված շենքը վերածել բարձրակարգ հյուրանոցի, ինչի շնորհիվ կստեղծվեն լրացուցիչ աշխատատեղեր:

7.7.4 Արդյոք փորձե՞լ եք միջոցներ հայթայթել տվյալ վայրի կամ հուշարձանի համար:
Ոչ

7.7.5 Արդյոք ստացե՞լ եք միջոցներ տվյալ վայրի կամ հուշարձանի համար*:*
Ոչ

7.8. Կառավարում

Վարպետաց փողոցի պատմական միջավայրի բարեկարգման ու զարգացման ծրագիրը կարճաժամկետ է: 2016 թ. օգոստոսի 12-ին COMUS ծրագրի շրջանակներում մշակված Գյումրու Ելակետային պլանը քաղաքի գլխավոր ճարտարապետ և ՏԾԽ անդամ Հենրիկ Գասպարյանի կողմից ներկայացվել է Գյումրու ավագանու խորհրդի նիստին և հաստատվել միաձայն քվեարկությամբ:

Գործընթացին կիրագործեն Գյումրու համայնքապետարանը, անհատ սեփականատերերը, ՀՀ մշակույթի նախարարությունը, մասնակցություն կունենան բնակիչները, քաղաքացիական հասարակությունը, տեղական ինքնակառավարման մարմինների մասնակիցները, ակտիվ խմբերը*:*

8. Փաստաթղթավորում

Նկ.3. Ռուսթավելի-Վարպետաց փողոցների անկյունի շենք փողոցների անկյունի շենք

Նկ.4. Ռուսթավելի-Վարպետաց

Նկ.5. Ռուսթավելի-Վարպետաց փողոցների անկյունային շենքի բակը

Նկ.6. Ավ. Իսահակյանի տուն-թանգարան

Նկ.7. Հ. Շիրազի հուշաթանգարան

Նկ.8. Խարխլված բնակելի առանձնատուն

Նկ.9. Բնակելի տուն

Նկ.10. Նորակառույց առանձնատուն



9. Նպատակահարմարության վերաբերյալ ուսումնասիրություններ

Անհրաժեշտ է ստեղծել մասնագիտական խումբ կազմված հետևյալ մասնագետներից՝ ծրագրի համակարգող, գիտական ղեկավար, միջազգային և տեղական խորհրդատուներ, վերականգնող ճարտարապետ, կոնստրուկտոր, երկրաբան, երկրաֆիզիկ, ներքին և արտաքին էլեկտրասնուցման, ջրամատակարարման և կոյուղու, գազաֆիկացման մասնագետներ, շրջակա միջավայրի վրա ներգործության գնահատողներ, դենդրոլոգներ, անվտանգության մասնագետներ, շինարարության տնտեսագետներ, վերականգնող շինարարներ, թանգարանագետներ, ինտերիերի և էքստերիերի դիզայներներ:

ՆՏԳ-ն իրականացրել է՝ Գայանե Նազլուխանյան